

Տեղի է ունեցել Հանրապետական գորակոչային հանձնաժողովի ընդլայնված նիստը

15.06.2015



Հունիսի 12-ին ՀՀ ՊՆ վարչական համալիրում տեղի ունեցավ Հանրապետական գորակոչային հանձնաժողովի ընդլայնված նիստը, որի ընթացքում ամփոփվեցին նախորդ ձևեռային գորակոչի արդյունքները և քննարկվեցին 2015 ամառային գորակոչի պատշաճ կազմակերպման ու անցկացման հարցերը:

Նիստին մասնակցում էին շահագրգիռ գերատեսչությունների ղեկավարներ, մարզպետներ, հանրապետության տարածքային զինվորական կոմիսարներ, բուժհանձնաժողովների անդամներ, ինչպես նաև գորակոչի անցկացմանն օժանդակող այլ կառույցների ներակայացուցիչներ:

Զորակոչի անցկացմանն օժանդակող յուրաքանչյուր օղակից ինչ աշխատանք է պահանջվելու, որոնք են նախորդ գորակոչի ընթացքում արձանագրված բացթողումներն ու ձեռքբերումները և ինչ առանձնահատկություններ են ներդրվելու հերթական գորակոչի ընթացքում: Այս հարցերի քննարկմանն էր նվիրված Հանրապետական գորակոչային հանձնաժողովի ընդլայնված նիստը:

Աշխարհաքաղաքական ներկա զարգացումների, տարածաշրջանում տիրող ռազմաքաղաքական իրավիճակի պայմաններում կարևորելով զինված ուժերի համալրման գործընթացի շարունակականությունը, պաշտպանական գերատեսչության ղեկավար Սեյրան Օհանյանն իր խոսքում նշեց, որ վերջին տարիներին գորակոչին մասնակցող բոլոր կառույցների համատեղ ջանքերի շնորհիվ առավել բարձր հիմքերի վրա է դրվել գորակոչի գործընթացի իրականացումը: Նախարարը կարևորեց գորակոչի ամբողջ ընթացքում հանրային իրազեկման իրականացումը, թափանցիկության և բանակ-հասարակություն լիարժեք փոխվստահության մթնոլորտի ապահովումը:

Խիստ վերահսկողության տակ կլինի գորակոչի ամբողջ գործընթացը, հատկապես՝ բժշկական հանձնաժողովների աշխատանքը՝ անառողջ զինակոչիկների գորակոչը բացառելու, միևնույն ժամանակ՝ կեղծ հիվանդությունների և այլ՝ քրեորեն պատժելի արարքների միջոցով գորակոչից խուսափողներին հայտնաբերելու և բոլոր մեղավորների նկատմամբ համապատասխան պատժամիջոցներ կիրառելու նպատակով: Օպերատիվ կերպով կուսումնասիրվեն և սահմանված կարգով կընթացավորվեն դիմում-բողոքներն ու ցանկացած տեսակի իրավախախտումները:

Նիստի ընթացքում հիմնական զեկույցով հանդես եկավ ՀՀ զինվորական կոմիսար, գնդապետ Հենրիկ Մուրադյանը: Խոսելով նախորդ զորակոչի արդյունքների և առաջիկա զորակոչի խնդիրների մասին, զինվորական կոմիսարը ներկայացրեց թե դրական միտումները և թե որոշակի բացթողումները: Անդրադարձ եղավ զորակոչվածների թվաքանակին, ծառայությանը ոչ պիտանի ճանաչվածների վիճակագրական տվյալներին, զինկոմիսարիատների և բուժհանձնաժողովների կողմից կատարված աշխատանքներին:

Քննարկվեցին նաև հայտնաբերված իրավախախտումներին ու հանցագործություններին, զինակոչիկների կցագրմանն ու հաշվառմանը, բժշկական հետազոտությանը, զորակոչից խուսափողների նկատմամբ պատժամիջոցների ու վարչական տույժերի կիրառմանը վերաբերող և զորակոչին առնչվող այլ հարցեր: Ամփոփելով Հանրապետական զորակոչային հանձնաժողովի ընդլայնված նիստի արդյունքները՝ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը փաստեց, որ կատարված հետևողական և բարեխիղճ աշխատանքների արդյունքում կոռուպցիոն դեպքերը շարունակական նվազել են, սակայն առկա են նաև թերացումներ: Ըստ այդմ՝ ամառային զորակոչի իրականացման միջոցառումներն էլ ավելի են խստացվելու:

Պաշտպանության նախարարը նաև նշեց, որ ընթացող բարեփոխումների համատեքստում, այդ թվում՝ զորակոչի շրջանակում ռազմավարական բնույթի լայն միջոցառումներ են իրականացվում, որոնց նպատակն է ամրապնդել բանակի և հասարակության միջև հաստատված սերտ կապը, ամրապնդել զինված ուժերի հանդեպ հասարակության վստահությունը, սկսած ընտանիքից ու դպրոցից նպաստել հայրենյաց պաշտպանի գաղափարապես ճիշտ դաստիարակմանը:

Նիստի ավարտին էլ ձմեռային զորակոչի անցկացման մի շարք պատասխանատուներ և զինծառայողներ պաշտպանության նախարարի կողմից արժանացան պատվոգրերի, արժեքավոր նվերների և գերատեսչական մեդալների:

Նիստի աշխատանքներին մասնակցել է նաև ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը:

Աղբյուրը՝ mil.am, 12.06.2015